ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 1916 Թ. ՀՈՒԼԻՍԻ 19-Ի «ԿԱՆՈՆԱԳԻՐ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ԵՒ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ» ՕՐԻՆԱԳԻԾԸ[21]

Վահագն Հարությունյան

Բանալի բառեր՝ կանոնագիր, կաթողիկոս, պատրիարք, կիլիկիահայություն, հայ եկեղեցի:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին թուրքական իշխանությունների կողմից կիլիկիահայության նկատմամբ իրականացված տեղահանության և կոտորածների քաղաքականությունը հաջորդաբար նոր վտանգ է ստեղծում Սսի կաթողիկոսության հետագա գոյության և Հայ առաքելական եկեղեցու միասնության համար :

Այս անգամ երիտթուրքական կառավարությունը ծեռնամուխ է լինում կիլիկիահայության ազգային-կրոնական գոյության կարգավիճակի այլափոխմանը: Այդ ծրագրի հիմնական նպատակը արևմտահայոց հոգևոր իրավակարգի ձևախեղումն էր, ըստ որի՝ ա) պիտի չեղարկվեր 1863 թ.արևմտահայերի ազգային Սահմանադրությունը, բ) պիտի վերանար 1461 թ. սուլթան Մահմուտ Ֆաթիհի կողմից ստեղծված Կ.Պոլսի հայոց պարիարքությունը, գ) Սսի կաթողիկոսական աթոռը պիտի տեղափոխվեր Երուսաղեմ, դ) արևմտահայության հոգևոր կենտրոն պիտի հռչակվեր Երուսաղեմի Հայոց վանքը, որտեղ իր աթոռը պիտի ստանձներ «Կաթողիկոս-Պատրիարք Թիւրքիոյ Հայոցը»-ը և ե) կաթողիկոս-պատրիարքի իրավասության տակ պիտի դրվեին Աղթամարի կաթողիկոսությունը, Կ.Պոլսի և Երուսաղեմի պատրիարքությունները: Այս ծրագրի հետին, բայց ակնհայտ նպատակը արևմտահայության և ռուսական ազդեցության գոտում գտնվող էջմիածնի կաթողիկոսության իրավական և վարչական հաստատությունների հետ կապերի խզումն էր:

Թուրքերը վստահ էին, որ եթե կիլիկիահայությանը կարողանային անջատել Ս. Էջմիածնից, ապա շատ ավելի հեշտ կլիներ արևմտահայությանն իր ինքնությունից զրկելը: Այդ նպատակով թուրքական կառավարությունը նախ որոշում է մշակել նոր կանոնադրություն Երուսաղեմի պատրիարքության իրավունքները սահմանափակելու և նրա նկատմամբ հսկողություն հաստատելու համար, իսկ այնտեղ նստող հովվապետին էլ տալՇё էր «Կաթողիկոս-Պատրիարք Թուքիոյ Հայոց» տիտղոսը:

Արդեն 1916 թ. սկզբներին Կ.Պոլսի պատրիարքարանի գործավար Գամեր Շիրինյանը Կ.Պոլսի ոստիկանության տեսուչ Պետրի բեյից և ոստիկանության քաղաքական բաժնի տնօրեն Ռեշիդ բեյից տեղեկացել էր, որ Ազգային Սահմանադրության և Կ.Պոլսի պատրիարքության վերաբերյալ «նոր օրենքն մը» մշակված է և հարմար պահին պիտի հրատարակվի [1]:

Նոր օրենքի ընդունման իրողությունն ակնհայտ է դառնում 1916 թ. մարտի 18-ին, երբ հայ մտավորականության բնաջնջման պատճառով Կ. Պոլսի Ազգային խառը ժողովը ստիպված է լինում դիմելáõ Արդարադատության նախարարությանը վարչական նոր ընտրություններ անցկանելու արտոնություն ստանալու խնդրանքով:

Զավեն պատրիարքը հաշվի առնելով նոր օրինագծի ընդունման մասին շրջանառվող շշուկները և չցանկանալով իշխանություններին առիթ տալ միջամտելու համայնքի ներքին գործերին, դիմում է խառը ժողովին, առաջարկելով աշխատանքները շարունակել եղած անդամներով: Սակայն ժողովականները իշխանությունների կասկածանքներից զերծ մնալու համար, նախընտրում են կառավարության առջև բարձրացնել նոր ընտրությունների անցկացման հարցը [2]:

---

[21] [21] Հոդվածն ընդունվել է 15.03.18:

Հոդվածը տպագրության է երաշխավորել գիտական ղեկավար, պ.գ.թ., դոցենտ Ա. Բալյան

Երբ այդ հարցով Գամեր Շիրինյանը դիմում է Կրոնի տեսուչ Պեհա բեյին և հայտնում է, որ մնացել են Ազգային խառը ժողովի ընդամենը 50 անդամներ, վերջինս խորհուրդ է տալիս սպասել ևս մի քանի օր կառավարական վերապահություններին տեղյակ լինելու համար:

Նախատեսվող փոփոխությունները Սսի կաթողիկոսին հայտնելու և նրան նոր պաշտոն առաջադրելու համար 1916թ. մայիսին Երուսաղեմ ժամանած Զեմալ փաշան իր մոտ է հրավիրում Սահակ Բ Խապայանին: Վերջինս, իր հետ վերցնելով Կիլիկիայի կաթողիկոսական տեղապահ Գյուտ եպիսկոպոսին և Եղիշե եպիսկոպոս Կարոյանին (հետագայում Լիբանանի թեմի առաջնորդ), մեկնում է Զեմալի հետ հանդիպման [3]: Ե-ղեռնագործ փաշան, հարմար պահ ընտրելով և կաթողիկոսի հետ առանձնանալով, միանգամից նրան հայտնում է իր ասելիքը. «...չենք ուզեր, որ մեր թշնամիին հպատակ եղող կաթողիկոս մը մեր տէրութեան սահմաններուն մէջ ապրող հայերուն Հոգեւոր Պետը ըլլայ, և կառաւարութիւնը որոշեց այդ հոգեւոր յարաբերութիւնը խզել և փոխանակ երկու Պատրիարքության և երկու Կաթողիկոսություն ունենալու, կը միացնէ Պոլսոյ և Երուսաղեմի Պատրիաքութիւնները և Աղթամարի Կաթողիկոսութիւնը և կը պահէ միայն Կիլկիոյ Կաթողիկոսութիւնը, որուն աթոռ պիտի ըլլայ Երուսաղեմի հայոց վանքը և իր տիտղոսն պիտի ըլլայ Կաթողիկոս-Պատրիարք բովանդակ Հայոց Թիւրքիոյ» [4] :

Այսպիսով՝ պարզ է դառնում իշխանությունների անմիջական ցանկությունը: Սակայն ակնհայտ էր, որ այդ ամենի հետևում թաքնված էր միայն մեկ նպատակ՝ վերացնել Սսի կաթողիկոսությունը և խզել նրա կապերը Ս. Էջմիածնի կաթողիկոսության հետ:

Կաթողիկոսի համար այդ գուՇԺն անսպասելի էր, սակայն նա հանդես է բերում սառնասրտություն՝ գիտակցելով, որ առաջարկը մեծ հարված էր Հայ եկեղեցուն և ուղղակիորեն անընդունելի էր դարավոր ավանդույթների տեսանկյունից, ուստի բավարարվում է միայն հետևյալ պատճառաբանությամբ, որ ինքը շատ ծեր է և խնդրում է, որ «... այս ծանր լուծը իր տկար ուսերուն վրա չդրուեր»: Սակայն փաշան պատասխանում է. «...Ձեր ժողովուրդի սիրոյն համար ստանձնեցեք այս պաշտօնը... Լաւ խորհեցէք. ո՞չ իբրեւ Հրամանատար, այլ իբրեւ Ձեր բարեկամը կը խօսիմ ... Սակայն պետական այս գաղտնիքը պէտք է գաղտնի մնայ, մինչեւ վերջնական որոշումը ծանուցուի...»[5]:

Զեմալը վերջնական պատասխանի համար կաթողիկոսին ընդամենը մեկ օր է տալիս՝ հավելելով Նախարարների խորհրդի «սիրահոժար» որոշումը, համաձայն որի Սսի կաթողիկոսության կալվածքները հանձնվելու էին Սահակ Բ կաթողիկոսին և այնտեղ պաշտոնավարելու համար նրան պատվիրում է մի եպիսկոպոս ընտրել:

Ժամանակավրեպ և ոչնչով չպատճառաբանված երիտթուրքերի կողմից պարտադրված պառակտիչ այդ որոշումը ծանրապես ազդում է ծերունազարդ կաթողիկոսի հոգու վրա, որն էլ շատ հուսահատ և տխուր վերադառնում է ս. Հակոբի վանք և խոստովանում. «Ախ, երանի՜թէ մահը հասնէր և գիս այս անտանելի կացութենէն ազատէր, նոյնիսկ Շահաբաս այս տեսակ ճիւաղային գաղափար մը չյղացաւ, հայ ժողովուրդը անջատել էջմիածնէն, տոսկալի բան է, թիւրքը այսքան դարերէ ի վեր տակաւին չէ կրցած հասկանալ հայ ժողովուրդին մտայնութիւնը, հայ ժողովուրդին՝ հանդէպ էջմիածնի ունեցած պաշտումը» [6]:

Սակայն մեկ օր անց Սահակ Բ Խապայանը Զեմալին տեղեկացնում է իր հոժարամտության մասին, որը շատ է ուրախացնում փաշային, որն էլ որպես Սսի կալվա՛ծքների պատասխանատու նշանակում է Եղիշե եպիսկոպոս Կարոյանին [7]:

Առաջին աշխարհամարտի տարիներին թուրքական կառավարության կողմից Հայ Առաքելական եկեղեցու նվիրապետության դեմ կատարված ոճրագործություններից ամենասարսափելին թերևս «Կանոնագիր Հայոց Կաթողիկոսութեան եւ Պատրիարքութեան» օրինագիծն էր [8], որը թվագրված է 2 հունիս 1334 թ. («19 հուլիսի / 1 օգոստոսի 1916 թ.»), ստորագրված է Մեմեդ Ռեշատի կողմից և հաստատված թուրքական

հայատյաց կառավարության ղեկավար անձանց Մեհմեդ Սայիդ (Եպարքոս), Մուսա Քյազիմ (Շեյխ ուլ-իսլամ), Էնվեր (Ռազմական և ծովային նախարարի պաշտոնակատար), Թալեաթ (Ներքին գործերի և ելևմտական նախարար), Խալիլ (Արտաքին գործերի նախարար և Դատական ու կրոնի նախարարի պաշտոնակատար), Իբրահիմ (-Պետական խորհրդի նախագահ և Էվգաֆի (մզկիթապատկան հողատիրության) նախարարի պաշտոնակատար), Ապպաս (Հանրային շինությունների նախարար), Սիմեդ Շյուքրի (Կրթության նախարար և Թղթատարական, հեռագրական, հեռաձայնական, առևտրական ու երկրագործական նախարարի պաշտոնակատար) ստորագրություններով [9]:

Շուտով օրինագիծը հրատարակվեց թուրքական կայսերական՝ «Թաքվիմի Վաքայի» թերթի 1916թ. օգոստոսի 10 թիվ 2611 համարում[10]:

Կանոնագիրը բաղկացած էր առաջաբանից (որն իր մեջ ներառում էր 1-ին և 2-րդ հոդվածները), 3 գլուխներից և 39 հոդվածներից:

«Կանոնագիր հայոց կաթողիկոսության և պատրիարքության» անունը կրող հրովարտակի առաջաբանում նշվում էր, որ «Սսոյ և Աղթամարի Հայ Կաթողիկոսութիւնները միացուած և Կ.Պոլսոյ ու Երուսաղէմի Պատրիարքութիւններն ալ այս Կաթողիկոսութեան վրայ աւելցուած են: Օսմանցի Հայերուն ընդհանուր հոգեւոր նախագահութիւնն այս Կաթողիկոսութեան և Պատրիարքութեան կը պատկանի և բոլորովին կտրուած են իրենց կապն ու յարաբերութիւններն Էջմիածնի Կաթողիկոսութեան հետ: Կաթողիկոսին ու Պատրիարքին բնակավայրն է Երուսաղէմ Ս. Հակոբի վանքը, և իր հոգեւոր շրջանակն են Օսմանեան երկրները» [11]:

Հոդված 2-րդով սահմանափակում էր մտցվում կաթողիկոս-պատրիարքի իրավասությունների մեջ, որը պետք է գործեր կանոնագրի սահմաններում՝ «բարձր Պէրաթով» և իրավունք ուներ դիմելու միմիայն Կրոնի նախարարություն, այն էլ միայն կրոնական գործերի համար:

1-ին գլուխը, որն ուներ «Ընտրութիւնք, Կազմակերպութիւնք եւ Պարտականութիւնք» վերնագիրը, բաղկացած էր 5 հատվածներից, որոնք էլ իրենց հերթին բաժանված էին համապատասխանաբար 21 հոդվածների: 1-ին հատվածը՝ «Կանոն եւ պայման ընտրութեան պատրիարքի» վերնագրով, բաժանվում էր 2 հոդվածների (3-րդ և 4-րդ):

Եթե կաթողիկոսության և պատրիարքության պաշտոնը թափուր մնար, Հոգևոր և Խառը ժողովների անդամները առավելագույնը երեք օրվա ընթացքում պետք է գումարեին ժողով և անվանի առաջնորդներից մեկին ընտրեին պատրիարքական տեղապահ, որի առաջադրումը պիտի համաձայնեցվեր Կրոնի նապարարության հետ: Բ.Դռան կողմից վավերացնելուց հետո, տեղապահը պետք է դիմեր բոլոր առաջնորդներին, որպեսզի ընտրության համար ներկայացնեին մեկական պատվիրակներ հոգևոր և աշխարհիկ դասերից [12]: Պատվիրակները մինչև 45 օրվա ընթացքում պետք է հավաքվեին պատրիարքարանում և Հոգևոր ու Խառը ժողովի անդամների հետ միասին, գաղտնի քվեարկությամբ, ներկայացնեին պատրիարքի թեկնածուների ցուցակ, որոնց թիվը 7-ից պակաս չպետք է լիներ: Բ. Դուռն իրեն իրավունք էր վերապահում զտումներ կատարելáõ ցանկում: Ընտրական ժողովը գաղտնի քվեարկությամբ և բացարձակ մեծամասնությամբ առանձնացնում էր երեքին, որոնցից մեկն էլ դարձյալ գաղտնի քվեարկությամբ և բացարձակ մեծամասնությամբ ընտրվելու էր կաթողիկոս և պատրիարք, որը հաստատվելու էր Կրոնի նախարարության կողմից կայսերական իրադեով (հոդվ. 3) [13]: 4-րդ հոդվածը հիմնականում այն նախապայմանների մասին էին, որով պետք է օժտված լիներ պատրիարքական թեկնածուն: Նա պետք է ունենար եպիսկոպոսական հոգևոր աստիճան, լիներ օսմանյան հպատակ, առնվազն 45 տարեկան, իր վարք ու բարքով վստահություն ներշնչող անձնավորություն, չլիներ դատված, 5 տարի բարեխնամ կերպով կառավարած լիներ որևէ առաջնորդարանում, ծանոթ լիներ պե-

տական լեզվին, ընդհանուր օրենքներին, կանոնագրերին և այն պայմաններին ու կանոններին, որոնք անհրաժեշտ էին պատրիարք-կաթողիկոսի ընտրության ժամանակ:

Երկրորդ հատվածը կրում էր՝ «Հոգեւոր ժողովին կազմութիւնը եւ պարտականութիւնները» վերնագիրը և բաժանվում էր երկու հոդվածների (5-րդ և 6-րդ հոդվածներ): Այն հիմնականում վերաբերում էր, թե ինչպես պետք է կազմվեր Հոգևոր ժողովը և ինչ պարտականություններ ուներ այն կատարելու: Հոգևոր ժողովը ընտրվում էր 2 տարի ժամանակով (ամեն տարի կեսը փոխվում էր) և հաստատվում Կրոնի նախարարության կողմից: Այն բաղկացած էր 12 եպիսկոպոսներից, որոնց նախագահում էր պատրիարքը, որի բացակայության, կամ հիվանդության դեպքում անդամներից մեկը նշանակվում էր փոխանորդ: Այս ժողովի նպատակն էր հսկել հոգևորականների պատրաստությանը, հայ դպրոցներում կրոնական ուսուցման զարգացմանը, կրոնական խնդիրների լուծմանը և հոգ տանել, որպեսզի հասարակության մեջ «Հայ եկեղեցիին աւանդութիւններն ու պատմութիւնները հասարակութեան միջեւ ամրապնդուին» (հոդվ. 6) [14]:

Երրորդ հատվածը բաղկացած էր 3 հոդվածներից (7, 8, 9) և կրում էր՝ «Խաւը ժողովի կազմութիւնն ու պարտականութիւնները» վերնագիրը: Խաւը ժողովը պետք է բաղկացած լիներ 12 անձերից, որոնցից 4-ը՝ Հոգևոր ժողովից, իսկ մնացած 8-ը՝ պարտադիր ոչ հոգևորական՝ ազգի երևելիներից: Հոգևոր ժողովի նախագահը պատրիարքն էր, որի տեղակալ կարող էր նշանակվել հոգևորական անդամներից որևէ մեկը: Անդամները պետք է ընտրվեին առաջնորդություններից՝ յուրաքանչյուրից մեկ հոգի՝ երկու տարի ժամանակով: Բոլոր անդամները պետք է վավերացվեին Կրոնի նախարարության կողմից և տարվա ընթացքում անդամների կեսը պիտի փոփոխվեր (հոդվ. 7):

Խաւը ժողովը պետության կողմից նշանակված մարմին էր, որը պիտի հսկեր պատրիարքին ենթակա եկեղեցիների, վանքերի, մասնավոր վարժարանների և բարեգործական հաստատություններին պատկանող կալվածների հասույթները և ծախսերը, և կազմակերպեր նվիրատվությունների վերահսկողությունը (հոդվ. 8):

Իններորդ հոդվածում էլ շեշտը դրվում էր դպրոցներում կրոնական ուսուցման դասավանդմանը և այդ հաստատությունների հասույթների ու ծախսերի հաշվառման վրա[15]:

Չորրորդ հատվածը, որը կրում էր՝ «Պատրիարքին եւ ժողովներու միջեւ յարաբերութիւնք» վերնագիրը, բաղկացած է 7 հոդվածներից (հոդ. 10-16-ը): Պատրիարքը անձնական շարժառիթներով չէր կարող նախապատվությունը տալ Հոգևոր և Խաւը ժողովի անդամներից որևէ մեկին: Նա պետք է կարգազանց արարքներից և խոսքերից զերծ մնար: Անդամներն էլ իրենց հերթին պարտավոր էին հարգալից լինել պատրիարքի նկատմամբ (հոդվ. 10): 11, 12-րդ հոդվածները ժողովի կարգապահական խնդիրների մասին էին, 13-րդը՝ անկարգապահ պատգամավորի հանդեպ կիրառվող նախազգուշացումների և պատժամիջոցների (նույնիսկ նոր անդամի ընտրության) վերաբերյալ, 14-րդ և 15-րդ հոդվածները իրավունք էին տալիս Հոգևոր, կամ Խաւը ժողովներին գանգատվելու պատրիարքի դեմ, սակայն եթե անդամներից մեկը, կամ մի քանիսը իրենց պաշտոնին վերաբերող գործերի պատճառով գանգատվեին, պատրիարքն իրավունք ուներ 15 օրվա ընթացքում բացատրություն տալու և, երբ մեծամասնությունն այն համարեր բավարարող պատասխան, խնդիրը պիտի փակվեր, իսկ եթե ոչ՝ ապա պետք է ժողով գումարվեր երիցագույն եպիսկոպոսի նախագահությամբ, և եթե ժողովի անդամներից 14-ը, այսինքն 2/3-ը պնդեին, որ բողոքն արդարացի է, ապա դրան անհապաղ պիտի հետևեր պատրիարքի պաշտոնանկության որոշումը, որն անմիջապես պիտի հաղորդվեր Կրոնի նախարարությանը և պատրիարքին: Վերջինս էլ պարտավոր էր 24 ժամվա ընթացքում իր հրաժարականը ներկայացնել Կրոնի նախարարությանը և Աթոռը լքել, այլապես եթե այս կարգը չկատարվեր, ապա պատրիարքը կառավարության միջամտությամբ կհեռացվեր պատրիարքարանից:

Այսպիսով՝ ինչքան էլ որ կառավարությունն իրեն մտահոգ էր համարում այս կաթողիկոս-պատրիարքության պահպանման գործում, մյուս կողմից էլ արհեստական խոչընդոտներ էր հարուցվում, որպեսզի պատրիարքը մշտապես կախվածություն ունենար Խառը և Հոգևոր Ժողովի անդամներից, որոնց մեծ մասը նշանակված էին կառավարության հավանությամբ: Այսպիսով, կանոնագրի այս կետերը կաղապարում էին կաթողիկոսի քայլերը [16]:

Հինգերորդ հատվածը, որն ուներ «Պատրիարքարանին ընդհանուր վարչութիւնը» վերնագիրը, բաղկացած էր 5 հոդվածներից (17-21): Այն հիմնականում բաղկացած էր պատրիարքարանի ներքին հարցերը կարգավորող հոդվածներից: Պատրիարքի, Հոգևոր և Խառը ժողովների անդամների ու պատրիարքարանի մնացած բոլոր աշխատակիցների աշխատավարձերը, պետք է վճարվեին պատրիարքարանի բյուջեից՝ Խառը ժողովի կարգադրությամբ, պատրիարքի հաստատումով և կրոնի նախարարությանը տրվելիք համապատասխան փաստաթղթերում ձևակերպելուց հետո (հոդվ. 20) [17]: Պատրիարքարանի սնդուկը՝ բյուջեն, գտնվում էր Խառը ժողովի հսկողության ներքո (հոդվ. 21):

Երկրորդ գլուխը կրում էր «Առաջնորդութիւնները» վերնագիրը և իր մեջ ներառում է 7 հոդված (հոդ. 22-28): Այս հոդվածներից 22-րդը հիմնականում վերաբերում էր պարտադիր այն նախապայմաններին, որոնք անհրաժեշտ էին, որպեսզի ունենար առաջնորդական թեկնածուն. նա ա) պետք է լիներ օսմանյան հպատակ, բ) դատապարտված չլիներ որևէ հանցանքի համար, գ) հայտնի չլիներ իր հոռի վարքով, դ) անպայման լրացած լիներ 35 տարին և լավ ծանոթ լիներ որքան հնարավոր է պետական լեզվին, օրենքներին և կանոնագրերին (հոդվ. 22):

Անդրադարձ էր կատարվում նաև թեմերի հավատացյալների քանակին: Հոդված 23-ում ասվում է, որ յուրաքանչյուր առաջնորդարան պիտի կազմվեր առնվազն 15 000 հայ բնակիչ ունենալու դեպքում: Այս հոդվածի մասին ահա թե ինչպես է արտահայտվում Մ. Արքեպիսկոպոս Օրմանյանը. «Դիտողութեան արժանի կը տեսնեմ նաև առաջնորդութիւնները առնուազն 15.000 հոգիէ կազմուած հայաբնակութեանց ենթարկել (յօդ. 23): Առաջնորդարանները ժողովուրդը խնամելու և ժողովուրդին հսկելու համար հաստատուած են, և խընամքն ու հսկողութիւնը ոչ թէ անձերու թիւով, այլ տեղւոյ սահմանով կրնայ իւր գործը արդիւնաւորել: Ծանօթութիւն ու մերձաւորութիւն, յարաբերութեանց դիւրութիւն ու տեղերու կարևորութիւն, ասոնք են որ պէտք էր նկատի առնուէին, և յարմարագոյն կ»ըլլար թերևս պայմանը կուսակալութեանց սահմաններուն կապել, քան թէ հայաբնակութեան ազգահամարին վրայ հիմնել» [18]:

Կ.Պոլսի առաջնորդը պիտի կրեր պատրիարքական փոխանորդ տիտղոսը և ունենար եպիսկոպոսական աստիճան (հոդվ. 24): Թեմական առաջնորդներին կից պետք է ստեղծվեին խորհրդատվական երկու մարմիններ, որոնք պետք է բաղկացած լինեին առավելագույնը 6 անդամներից (մեկ հոգևորական, իսկ մյուսները՝ տեղի երեցներից) (հոդվ. 26):

Քսանյոթերորդ հոդվածը վերաբերում էր առաջնորդարանների ծառայողներին (քարտուղարներ, բարապաններ), որոնք իրենց հասանելիք աշխատավարձները պիտի ստանային առաջնորդարանի բյուջեից, որն էլ իր հերթին պիտի գոյանար մկրտության, պսակի և հուղարկավորության ծեսերից ստացվող բոլոր նվիրատվություններից [19]:

Երրորդ գլուխն էլ վերնագրվում է՝ «Զանազանք» և իր մեջ պարունակում է 11 հոդված (29-39) [20]: Հետաքրքրական է, որ կաթողիկոս-պատրիարքի համար բնակավայր է հատկացվում Երուսաղեմի ս.Հակոբա վանքը (հոդվ. 36): Սրա մեջ միտում կար, քանի որ ինչպես Մ. Օրմանյանն է ասում. «…հայութեան կեդրոնը պետական կեդրոնէն հեռացնելով անոր կարևորութիւնը նուազել կը խորհուի» [21]:

Այսպիսով, ըստ կանոնագրի, լուծարվում էին հայ ազգաբնակչության քաղաքական և կրոնական իրավունքները, այն դեպքում, երբ Թալեաթը ժամանակին պատ-

րիարքին հավաստիացնում էր, որ «ոչ ոք ձեռք չի տա հայ ազգաբնակչության սահմանադրական իրավունքներին» [22]:

Ըստ 1916 թ. հուլիսի 16-ի կանոնագրի.

Ա. *Սսի և Աղթամարի կաթողիկոսությունները, Երուսաղեմի ու Կ.Պոլսի պատրիարքությունները միավորվում էին մեկ ընդհանուր միավորի՝ «կաթողիկոս-պատրիարք»-ի՝ որպես օսմանյան հայերի հոգևոր առաջնորդի ղեկավարության ներքո: Սահակ Բ Խապանյանը ստիպված էր ընդունել վերը նշված կանոնադրությունը և իրեն կոչել «Սահակ սրբազնագույն կաթողիկոս Հայոց Թուրքիո և պատրիարք Ս. Երուսաղեմի ու Կ. Պոլսո»: Ըստ էության Հայոց կաթողիկոսի տիտղոսն ու աստիճանը համապատասխանեցվում էր հունական ուղղափառ եկեղեցու պատրիարքի տիտղոսին ու աստիճանին:*

Կ.Պոլսի Հայոց պատրիարքը դադարում էր Օսմանյան Թուրքիայի հայ համայնքի ղեկավարը լինելուց և անտեսելով եկեղեցական պարտականությունները, նրան սահմանափակում էին համայնքի գործերի կառավարչի պաշտոնում: Այս առիթով Կ.Պոլսում Գերմանիայի դեսպան կոմս Վոլֆ Մետերնիխը գրում է. «Հայերի պատրիարքը այլևս հայ միլլեթի (ազգի) գլխավորը չէ, այլ մի ջեմայեթի, պաշտամունքային համայնքի առաջնորդ: Այս արտահայտությունը կիրառվում էր Բ.Դռան գրասենյակային ոճում՝ բողոքական հայերի համեստ համանայնքների և կարահտյան հրեաների վերաբերյալ (մինչդեռ հույները, հրեաները և մինչև այժմ նաև հայերը միլլեթ էին կազմում» [23]:

Կաթողիկոսը, պատրիարքը և եպիսկոպոսները, ինչպես համայնքի հասարակ քահանաները զրկվում էին բազմաթիվ լիազորություններից: Երուսաղեմի կաթողիկոս-պատրիարքն իրավունք էր ստանում միայն եպիսկոպոսներ ձեռնադրել Օսմանյան Թուրքիայում:

Կաթողիկոսի գործունեության սահմանափակումները նշանակում էին, որ ցանկացած պահին պատրիարքին հնարավոր էր պաշտոնից զրկել սուլթանական հրամանագրով՝ «ֆերմանով»: Նա պետք է գործեր կանոնակարգի սահմաններում և իրավունք ուներ դիմելու միմիայն Կրոնի նախարարությանը, այն էլ միայն կրոնական գործերի համար: Կ.Պոլսի գերմանական նորանշանակ դեսպան Վոլֆ Մետերնիխը ռայխսկանցլեր ֆոն Բեթման Հոլվեգին 1916 թ. օգոստոսի 23-ին իրազեկում էր, որ կաթողիկոսը զրկված է ամեն տեսակ քաղաքական գործողություններից, որ նա այլևս ազգային խորհրդի գործադիր մարմին չէ, այլ միայն կառավարության հրամաններ կատարող, որն իրավունք էր ստանում գործ ունենալ միայն պաշտամունքային գերատեսչության՝ որպես վերադաս իշխանության հետ, մինչդեռ նախկինում նա մուտք ուներ բոլոր պաշտոնյաների, նաև սուլթանի մոտ: Եվ վերջապես, եպիսկոպոս կարող էին կարգվել այն շրջաններում, որտեղ կար ավելի քան 15 000 բնակչության: Ըստ Մետերնիխի, նոր օրենքը հանրագումարի էր բերում կառավարության միջոցառումները, ըստ որոնց օսմանյան հայերը, որպես կենսական ազգ պետք է ոչնչացվեին [25]:

Բ. *Անվիճելի էր Բարձր Դռան քաղաքական շահը վերացնել երկակի և աստիճանակարգային (հիերարխիական) այն կապերն ու հարաբերությունները, ըստ որի Կ.Պոլսի պատրիարքը միաժամանակ ենթարկվում էր թուրքական կառավարությանը և էջմիածնի կաթողիկոսին: Աղթամարի և Սսի կաթողիկոսությունների ու երկու պատրիարքությունների միաձուլումով կաթողիկոս-պատրիարքը և նրան ենթական եպիսկոպոսներն այսուհետև անկախ էին դառնում էջմիածնից և հայ քաղաքական կուսակցություններից: Մ. Քելեշյանը նկատում է, որ «Կառավարութիւնը, հայութեան բեկորները վերջնականապէս անջատելու համար իրենց հոգեւոր կեդրոններէն, կ»ուզէ մոռցնել տալ էջմիածինն ու Հայաստան, միացնել Պոլսոյ և Երուսաղէմի պատրիարքութիւնները և պահել միայն մէկ կաթողիկոս-պատրիարք Երուսաղէմի մէջ» [26]:*

Յ.Լեփսիուսը կարծում է, որ էջմիածնի հետ կապի խզումը մոտավորապես նույն նշանակության մի միջոցառում էր, եթե Գերմանիայի կաթոլիկակական եկեղեցին պե-

տական օրենքով անջատվեր Հռոմից [27]: Իսկ Մաղաքիա Օրմանյանն էլ ասում էր, որ «Հայերը Մայր Աթոռէ բաժնել նոյն է ինչ որ է կաթոլիկները Հռոմէն բաժնելը…»[28]:

Էջմիածնի հետ բոլոր տեսակի կապերի խզումը հետագայում այն հետևանքն ունեցավ, որ արևմտահայերը զրկվեցին էջմիածնի կաթողիկոսի ընտրությանը մասնակցելու իրավունքից:

Գ. Իշխանությունների երրորդ կարևորագույն խնդիրը վերաբերում էր Հայոց Ազգային խորհրդի վերացմանը, որով վերջ էր տրվում «դեմոկրատական իշխանությանը» [29]:Փաստորեն փոշիացվում էր 1863 թ. Ազգային Սահմանադրությունը, դադարում էին գործել Կ.Պոլսի պատրիարքությունը, հայոց Ազգային մեծ խորհուրդը, ազգային գավառական, տնտեսական, ուսումնական և այլ ժողովները, իսկ ազգային գործունեությունը սահմանափակվում էր եկեղեցականների կողմից կատարվող զուտ ծիսական գործողություններով: «Մեծ խորհուրդը» հիմնականում կազմված էր մայրաքաղաքի աչքի ընկնող հայերից, որպես ազգի յուրատեսակ քաղաքական ներկայացուցչություն, որի ղեկավար էր կարգվել լուսավորչականների պատրիարքը՝ որպես հայ ժողովրդի հագևոր-ազգային ներկայացուցիչ: Հարյուրամյակներ գոյություն ունեցող արևմտահայ եկեղեցական համայնքը ազգի միասնության վերջին կապն էր:

Դ. Չորրորդ գլխավոր նպատակն այն էր, որ բոլոր դպրոցները դրվում էին կրթության նախարարության անմիջական վերահսկողության տակ, իսկ եպիսկոպոսներն ու քահանաները կարող էին ցանկացած պահի կառավարության կողմից հեռացվել պաշտոնից [30]:

Նշենք, որ 1916 թ. հուլիսի 19-ի օսմանյան այս օրենքը հակասում էր 1878 թ. Բեռլինի պայմանագրի դրույթներին, ըստ որի «բոլորն ապահովվում են ամեն տեսակ ժամերգության և եկեղեցական ծիսակատարության ազատությամբ և ոչ մի տեսակի ճնշումներ չեն կարող գործադրվել տարբեր կրոնական համայնքների հիերարխիկական կատուցվածքի նկատմամբ և իրենց հոգևոր պետերի հետ նրանց ունեցած կապերի մեջ» [31]:

Բանն այն է, որ եկեղեցու նվիրապետական կարգերը, կամ առաքելական օրենքները Օսմանյան պետության կողմից չէ, որ տրվել էին հայերին, որ իշխանություններն էլ ուզած ժամանակ այն հետ վերցնեին, կամ փոփոխեին: Ինչ վերաբերում է Աթոռների ձուլմանը, կամ բաժանելուն դա նույնպես օրինական չէր պետության կողմից, քանի որ «Աթոռներու գոյութիւնն ու ծագումը ու կեանքը եկեղեցական օրէնքներով եղած է, և եկեղեցական օրէնքներով միայն կրնայ փոփոխուիլ… հետևաբար, քաղաքական իշխանութեան ոտնձգութիւնը իրաւական եւ օրինական սկզբունքներու հակառակ է» [32]:

Այդ է պատճառը, որ Կ.Պոլսի գերմանական դեսպան Մետերնիխը 1916 թ. հուլիսի 19-ի «Կանոնագիր Հայոց Կաթողիկոսութեան եւ Պատրիարքութեան» օրինագիծը համարում է հայ ազգային եկեղեցու «Capitis deminutio» (իրավունքների սահմանափակում, կամ զրկում) [33], իսկ Յ.Լեփսիուսն այն համարում է արևմտահայության բնաջնջման գործի պսակը [34]:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Ատանայի հայոց պատմութիւն. պատմագրական, եղեռնագրական, ազատագրական, մշակոյթային, ազգագրական, վաւերագրական, ժամանակագրական, խմբագրեց Բիւզանդ Եղիայեան, Անթիլիաս-Լիբանան, 1970, էջ 367:
2. Տէր-Եղիաեան Զ. արք., Պատրիարքական յուշերս. վավերագրեր եւ վկայութիւններ, էջ 188-190:
3. Ատանայի հայոց պատմութիւն. «Գահիր», 1947, էջ 365:

4. Եղիայեան Բ., Ժամանակակից պատմութիւն կաթողիկոսութեան հայոց Կիլիկիոյ 1914-1972, Անթիլյաս-Լիբանան, 1975, էջ 57-58: Ահա թե ինչ ենք կարդում Կ.Պոլսի պատրիարք Զ. արք. Տէր-Եղիաեանի հուշերում. «1916թ. յունուարի սկիզբը Պատրիարքարանի գործակատար Գամէր Շիրինեան Ֆիլիպպէ գնաց՝ իր ընտանիքը տեսնելու: Վերադարձին ինծի պատմեց թէ Բիւզանդ Քէչեանի հետ տեսնուած էր ֆիլիպպէի մեջ: Քեչեան պատմած էր… թե տեսակցած է ոստիկանության տեսուչ Պէտրի Պէյի եւ ոստիկանութեան քաղաքական ճիւղի տնօրէն Ռէշատ Պէյի հետ, որոնք իրեն ըսած են՝ թէ Հայոց Ազգային Սահմանադրութիւնը ջնջուած է արդէն… նոր օրէնք մը շինուած է… Այս օրէնքով ծրագրուած էր Պատրիարքութիւնը էջմիածնէն բաժնել եւ Կիլիկիոյ կաթողիկոսութեան հետ միացնել, էջմիածնի հետ ամէն յարաբերութիւն խզելով…»: Մանրամասները տե՛ս Տէր-Եղիաեան Զ. արք., Պատրիարքական յուշերս. վավերագրեր եւ վկայութիւններ, էջ 187-88:
5. Ատանայի հայոց պատմութիւն, էջ 366:
6. Բաբգէն Ա Աթոռակից կաթողիկոս, Մեծի Տանն Կիլիկիոյ, Պատմութիւն կաթողիկոսաց Կիլիկիոյ (1441 էն մինչեւ մեր օրերը), Անթիլիաս-Լիբանան, 1939, էջ 926-927:
7. Տե՛ս Ատանայի հայոց պատմութիւն, էջ 366:
8. Տե՛ս Հրամանաւ Տ.Տ. Սահակայ Սրբազնագոյն կաթողիկոսի Հայոց Թուրքիոյ եւ Պատրիարքի
9. Ս. Երուսաղէմի և Կ.Պոլսոյ, Երուսաղեմ, 1917:
10. Տե՛ս Բաբգէն Ա. Աթոռակից կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, Պատմութիւն կաթողիկոսացԿիլիկիոյ (1441 էն մինչեւ մեր օրերը), էջ 948:
11. Տե՛ս Գերմանիան և Հայաստանը 1914-1918, դիվանագիտական փաստաթղթերի ժողովածու, հատոր II, հրատարակությունը և ներածությունը՝ դոկտոր Յոհաննես Լեփսիուսի, Եր.,, 2008, էջ 86-87:
12. Բաբգէն Ա. Աթոռակից կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, Պատմութիւն կաթողիկոսաց Կիլիկիոյ (1441 էն մինչեւ մեր օրերը), էջ 934:
13. Նույն տեղում:
14. Նույն տեղում, էջ 935:
15. Նույն տեղում, էջ 936:
16. Նույն տեղում, էջ 937-938:
17. Նույն տեղում, էջ 938-941:
18. Նույն տեղում, էջ 941-943:
19. Օրմանեան Մ. արքեպս., Խոհք եւ խօսք իր կեանքին վերջին շրջանին մէջ, Երուսաղեմ, 1929, էջ 341-342:
20. Տե՛ս Բաբգէն Ա. նշվ.աշխ., էջ 943-945:
21. Նույն տեղում, էջ 945-948:
22. Օրմանեան Մ. արքեպս., Խոհք եւ խօսք իր կեանքին վերջին շրջանին մէջ, էջ 341-342:
23. Գերմանիան և Հայաստանը 1914-1918, Տե՛ս Գերմանիան և Հայաստանը 1914-1918, դիվանագիտական փաստաթղթերի ժողովածու, հատոր I, հրատարակությունը և ներածությունը՝ դոկտոր Յոհաննես Լեփսիուսի, Եր., 2006, էջ 55:
24. Նույն տեղում, էջ 54:
25. Նույն տեղում, էջ 88:

26. Քէլէշեան Մ., Սիս-Մատյան, պատմական, բանասիրական, տեղեկագրական, ազգագրական եւ յարակից պարագաներ, Պէյրութ, 1949, էջ 280:
27. Տե՛ս Գերմանիան և Հայաստանը 1914-1918, դիվանագիտական փաստաթղթերի ժողովածու, հ.I, էջ 54:
28. Օրմանեան Մ. արքեպս., Խոհք եւ խօսք իր կեանքին վերջին շրջանին մէջ, էջ 339:
29. Տե՛ս Գերմանիան և Հայաստանը 1914-1918, դիվանագիտական փաստաթղթերի ժողովածու, հ.II, հրատարակությունը և ներածությունը՝ դոկտոր Յոհաննես Լեփսիուսի, էջ 87:
30. Օհանջանյան Ա., 1915 թվական. անհերքելի վկայություններ(Ավստրիական վավերագրերը հայոց ցեղասպանության մասին), Եր., 1997, էջ 118:
31. Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), պրոֆ. Ձ.Ս. Կիրակոսյանի խմբագրությամբ, Եր., 1972, էջ 128:
32. Օրմանեան Մ. արքեպս., Խոհք եւ խօսք իր կեանքին վերջին շրջանին մէջ, էջ 340:
33. Տե՛ս Գերմանիան և Հայաստանը 1914-1918, դիվանագիտական փաստաթղթերի ժողովածու, հ.II, էջ 88:
34. Գերմանիան և Հայաստանը 1914-1918, դիվանագիտական փաստաթղթերի ժողովածու, հ.I, էջ 55:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Օսմանյան կառավարության 1916 թ. հուլիսի 19-ի «Կանոնագիր Հայոց կաթողիկոսութեան եւ պատրիարքութեան» օրինագիծը

Վահագն Հարությունյան

Առաջին աշխարհամարտի տարիներին թուրքական կառավարության կողմից Հայ Առաքելական եկեղեցու նվիրապետության դեմ կատարված ոճրագործություններից ամենասարսափելին թերևս ,Կանոնագիր Հայոց Կաթողիկոսութեան եւ Պատրիարքութեանե օրինագիծն էր, որը թվագրված է 19 հուլիսի /1 օգոստոսի 1916 թ.:

Կանոնագիրը բաղկացած էր առաջաբանից, 3 գլուխներից և 39 հոդվածներից:

Օրինագծի հիմնական նպատակը արևմտահայոց հոգևոր իրավակարգի ձևախեղումն էր, ըստ որի՝ պիտի չեղարկվեր 1863 թ.արևմտահայերի ազգային Սահմանադրությունը, պիտի վերանար Կ.Պոլսի հայոց պարիարքությունը, Սսի կաթողիկոսական աթոռը պիտի տեղափոխվեր Երուսաղեմ, Ա արևմտահայության հոգևոր կենտրոն պիտի հռչակվեր Երուսաղեմի Հայոց վանքը և կաթողիկոս-պատրիարքի իրավասության տակ պիտի դրվեին Աղթամարի կաթողիկոսությունը, Կ.Պոլսի և Երուսաղեմի պատրիարքությունները:

SUMMARY

Ottoman Government Bill on "The Statute of the Armenian Catholicosate and Patriarchy" dated July 19, 1914

Vahagn Harutyunyan

Keywords: *bill, Catholicos, patriarch, Kilikian Armenia, Armenian church*

During the years of the First World War among the most terrifying crimes of the Turkish government against the clergy of the Armenian Apostolic Church was the bill on "The Statute of the Armenian Catholicosate and Patriarchy", which dated July 19, 1914. The statute consisted of the Introduction, three chapters and 39 articles.The main purpose of the Bill was the profanation of the spiritual order in Western Armenia, according to which the national Constitution of Western Armenians, dated 1863, was to be dissolved, the Armenian Patriarchy of Constantinople was to be eliminated, the throne of the Catholicos of Sis was to be replaced to Jerusalem, the spiritual centre of Western Armenia was to become the Armenian Church of Jerusalem and the Catholicos-Patriarch was to undertake the jurisdiction over Akhtamar Catholicosate, as well as over the patriarchates of Constantinople and Jerusalem. The hidden, but, at the same time, obvious purpose of this program was to interrupt all the connections of western Armenians with the legal and administrative institutions of the Echmiadzin Catholicosate.

РЕЗЮМЕ

Оттоманский правительственный законопроект об «Уставе Армянского Католикосата и Патриархата» от 19 июля 1914 года

Ваагн Арутюнян

Ключевые слова: *законопроект, католикос, патриарх, киликийская Армения, армянская церковь*

В годы Первой мировой войны среди самых ужасающих преступлений турецкого правительства против духовенства Армянской Апостольской церкви был законопроект «Положение о Католикосате и Патриархате Армении» от 19 июля 1914 года. Состоял он из введения, трех глав и 39 статей. Основной целью законопроекта была профанация духовных порядков в Западной Армении, согласно которой национальная конституция западных армян, датированная 1863 годом, должна была быть распущена, Константинопольский Патриархат должен был быть ликвидирован, трон Католикоса Сис должен был быть перенесен в Иерусалим, духовным центром Западной Армении должна была стать Армянская церковь Иерусалима, а Католикос-Патриарх должен был взять на себя юрисдикцию над Католикосатом Ахтамар, а также над патриархатами Константинополя и Иерусалимаю Скрытая, но в то же время очевидная цель этой программы заключалась в том, чтобы прервать все связи западных армян с юридическими и административными учреждениями Католикосата Эчмиадзина.